ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

20.7.2015թ.
1112/07351

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010-56-03-60

Հարգելի՛ պարոն Հայրապետյան,

Ի պատասխան 2015թ. հուլիսի 14-ի Ձեր նամակի, տեղեկացնում ենք, որ օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից մատուցվող հյուպատոսական ծառայությունների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում:

Համաձայն նշված օրենքի՝ օտարերկրյա պետություններում վավերական ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար պետական տուրքը կազմում է 65,000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացուն օտարերկրյա պետություններում վավերական անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը մինչև երկու տարի ժամկետով երկարաձգելու համար պետական տուրքը կազմում է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ, իսկ երկու տարուց ավելի ժամկետով երկարաձգելու համար 20,000 (քսան հազար) ՀՀ դրամ:

Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դեսպանություններում և հյուպատոսական հիմնարկներում աշխատող հյուպատոսներն իրականացնում են նաև արտագնա հյուպատոսական ընդունելություններ, որի ընթացքում մատուցվում են տարատեսակ հյուպատոսական ծառայություններ, այդ թվում՝ անձնագրի փոխանակման և օտարերկրյա պետություններում վավերականության երկարաձգման գործեր:

Հյուպատոսական ծառայությունների մատուցման համար, բացի պետական տուրքից, ՀՀ օրենսդրությամբ այլ վճարներ սահմանված չեն:

Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, Ֆաքս +374 60 620062
2 Government House, Republic Square, 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am, www.mfa.am

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պետական տուրքի դրույքաչափերը հրապարակված են ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում, բոլոր դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների պաշտոնական կայքերում, ինչպես նաև փակցված են քաղաքացիների ընդունելության սրահների տեսանելի մասերում:

Սկսած 2013թ. մարտ ամսից՝ քաղաքացիները հնարավորություն ունեն հյուպատոսական ծառայությունների համար վճարումը կատարել նաև առցանց՝ նախարարության կամ դեսպանության (հյուպատոսական հիմնարկի) պաշտոնական կայքի միջոցով: Տես հղումը՝ http://mfa.am/hy/fees/:

Ձեր կողմից նշված տեղեկությունները ստուգելու և հարցն ըստ էության ուսումնասիրելու համար խնդրում ենք տրամադրել մանրամասն տեղեկություններ (տվյալ քաղաքացու, վճարումը կատարելու ամսաթվի, վայրի, հյուպատոսի և այլ հանգամանքների վերաբերյալ):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Սասուն Հովհաննիսյան
Հեռ. (060)620-206